2010, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (316)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց Բաքվում ընթացող Կրոնապետերի համաշխարհային գագաթնաժողովին




Ապրիլի 26-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի եւ Կովկասի մահմեդականների առաջնորդ Շեյխ Ուլ Իսլամ Փաշա Զադեի հրավերով, մեկօրյա այցով մեկնեց Բաքու՝ մասնակցելու հոգեւոր առաջնորդների՝ համաշխարհային երկրորդ գագաթնաժողովին:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպս Մանուկյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը: Համաժողովին մասնակցում էր նաեւ ԱՄՆ Արեւելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արք. Այքազյանը՝ որպես ԱՄՆ եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ:

Նորին Սրբությունը, Հայ Եկեղեցու եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի անունից ողջունելով համաժողովի մասնակիցներին, արդյունավետ աշխատանք մաղթեց համագումարին:

*«Գոհություն ենք մատուցում Տիրոջը, որ բարի կամքի վկայությամբ Մենք՝ կրոնական առաջնորդներս, համախմբվել ենք միասնաբար խորհելու եւ համագործակցության ուղիներ փնտրելու արդի աշխարհում հոգեւոր արժեքների պահպանությանն ու ամրապնդմանն ի խնդիր եւ սիրո, համերաշխության ու համագործակցության մեր կոչն ուղղելու մեր ժողովուրդներին եւ ողջ աշխարհին՝ հանուն մարդկությանը հուզող ներկա կյանքի մարտահրավերների եւ հիմնախնդիրների հաղթահարման:*

*Ողջունելի է նախաձեռնությունը գագաթնաժողովում քննարկելու համաշխարհայնացման, կրոնի, ավանդական արժեքների վերաբերյալ հարցերը եւ այս շրջանակներում անդրադառնալու մշակույթների եւ կրոնների երկխոսության, ինչպես եւ՝ աշխարհի արդար ու խաղաղ ընթացքը խաթարող վտանգները հաղթահարելու խնդիրներին: Մեր սրբազան պարտականությունն է ամեն ջանք, ուժ եւ եռանդ բերել պատերազմների եւ ահաբեկչությունների դադարեցման, աղքատության եւ դրանից բխող սոցիալական խնդիրների վերացման ուղղությամբ՝ հանուն մարդկության ապահով, բարօր ու խաղաղ կյանքի, ինչը կամենում է նաեւ Աստված, որովհետեւ, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, «Աստված խռովության Աստվածը չէ, այլ խաղաղության» (Ա Կորնթ. ԺԴ 33)»*,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Խոսելով համաշխարհայնացման վտանգների մասին՝ Վեհափառ Հայրապետն ասաց. *«Մեր օրերում շարունակ առավել մեծ շրջագիծ ընդգրկող հաղորդակցության եւ համագործակցության գործընթացները քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, կրթամշակութային ու այլ ասպարեզներում եւ ժողովուրդների մեջ մշտապես սերտացող առնչություններն ու կապերը, ցավոք, դեռ չեն գծագրում հեռանկարը այնպիսի աշխարհի, ուր թագավորում են մարդասիրությունը, արդարությունը, աստվածադիր պատվիրանն ու օրենքը, ուր գերագույն արժեք է մարդը, եւ հարգվում է նրա իրավունքը: Այսօր համընդհանուր մտահոգություն են տեխնոլոգիական փորձարկումների, մթնոլորտային արտանետումների արդյունքում առաջ եկող կլիմայական եւ բնապահպանական խնդիրները, որ վկայում են արարչաստեղծ աշխարհի հանդեպ մարդկային հարգանքի եւ հոգածության պակասի մասին: Բազմահազար մարդկանց ապահովությունն ու կյանքը վտանգում են ահաբեկչությունը, միջպետական եւ տարածաշրջանային հակամարտությունները, ազգամիջյան բախումները: Հավելյալ սպառնալիքներ են ստեղծում տեղեկատվական սադրանքները եւ կրոնական գործոնի շահարկումը՝ խեղաթյուրված փաստերով եւ հավատացյալների կրոնական գիտակցության խաթարումով առավել բորբոքելով աղետների եւ բախումների կրակը եւ առիթ ծառայում մշակութային արժեքների ոչնչացման համար:*

*Շարունակությունը՝ էջ 2*



## ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Ապրիլի 24-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ թեմակալ առաջնորդների եւ Մայր Աթոռի միաբանների, այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր հայ նահատակների հիշատակին:

Հուշահամալիրում Ամենայն Հայոց Հայրապետը եւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակներ զետեղեցին, ապա կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Նույն օրը Մայր տաճարում մատուցվեց սբ պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Արտակ եպս Տիգրանյանը: Արարողության ընթացքում օրվա խորհրդի մասին Ամենայն Հայոց Հայրապետն աշխարհասփյուռ հայ ժողովրդին հղեց իր պատգամը՝ *«Արդար է Տերը, արդարություն է սիրում, ճշմարտությանն է նայում երեսը Նրա»* (Սաղմ. Ժ 8) բնաբանով: Իր խոսքում Նորին Սրբությունն ասաց.

*«Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ:*

*Այսօր Հայրենիքի եւ Սփյուռքի մեր եկեղեցիներում սրբազան պատարագի մատուցմամբ, հուշակոթողների մոտ խոնարհումով եւ աղոթքով հիշատակում ենք 95-րդ տարելիցը Հայոց Ցեղասպանության: Տասնամյակների ընթացքում մեր ժողովուրդը միայնակ է կրել 20-րդ դարի իր մեծագույն ողբերգության խոր վիշտը: Այսօր բյուրավոր մարդիկ մեզ հետ նշում են հիշատակը Ցեղասպանության, որ մարդկության կյանքում բացառվեն այդօրինակ ոճիրները, զորանան խաղաղությունը, արդարությունը եւ երջանկությունը աշխարհում: Տարիներ շարունակ մեր ժողովուրդը միայնակ է հետամուտ եղել արդար իր դատի պաշտպանությանը՝ մնալով «ամեն կողմից ճնշված, բայց ոչ՝ ընկճված, կարոտյալ, բայց ոչ՝ հուսահատ, հալածված, բայց ոչ՝ լքված» (Բ Կորնթ. Դ 8-9), այլ ապավինած քրիստոնեական իր հավատքին, մարդկության համար խաչված եւ հարություն առած Փրկչին աշխարհի, ուժ եւ զորություն է գտել Հայրենիքում եւ Սփյուռքում նոր կյանքով հառնելու եւ իր իրավունքները պաշտպանելու: Այսօր Հայոց Ցեղասպանությունը ճանաչված է շատ ժողովուրդների, պետությունների, պետական եւ հասարակական կառույցների կողմից՝ համոզումով, որ խաղաղ ապագայի հույսը արդարության իրագործումն է, որի ճշմարիտ դրսեւորումը երկրային այս կյանքի մեջ մարդկանց եւ ազգերի իրավունքների պաշտպանությունն է: Միածնաէջ այս սբ տաճարում Աստծո եւ մեր նահատակ բյուրավոր զոհերի հիշատակի առջեւ աղոթք բարձրացնելով՝ շնորհակալության Մեր խոսքն ենք հղում բոլոր պետություններին, հասարակական կառույցներին եւ անձանց, ովքեր ճանաչում եւ դատապարտում են Հայոց Ցեղասպանությունը եւ այսօր մեր ժողովրդի հետ են իրենց աղոթքներով:*

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս, այսօր մեր արդար դատը ներկայացնում ենք վերականգնված մեր պետականությամբ եւ աշխարհի բազմաթիվ երկրներում հարգված ու վստահելի, հոգեւոր ու ազգային կյանքով ամուր մեր համայնքներով: Այո՛, մեր ժողովուրդը կարողացել է ոտքի կանգնել, բայց դեռ ամոքված չէ կրած կորուստների ցավը: Ցեղասպանության զոհեր են սփյուռքահայ տարագիր մեր զավակները, ովքեր տուն, ընտանիք կորցրած, Հայրենիքից զրկված՝ ապրեցին տարբեր երկրներում՝ իրենց նոր կյանքը կառուցելով զրկանքներով ու բազում դժվարություններով: Ցեղասպանության զոհեր են ստիպողաբար իսլամ ընդունած հայերը եւ նրանց սերունդները, ովքեր վախենում են խոսել իրենց ինքնության մասին: Ցեղասպանության զոհ է Հայոց Եկեղեցին՝ հարյուրավոր եկեղեցիների ու վանքերի ավերումով, վերածումով մզկիթների, հազարավոր եկեղեցականների կորուստով, մշակութային դարավոր գանձերի մոխրացումով ու ոչնչացմամբ:*

*Շարունակությունը՝ էջ 3*



# Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց Բաքվում ընթացող Կրոնապետերի համաշխարհային գագաթնաժողովին

*Սկիզբը՝ էջ 1*

*Համաշխարհայնացման ընթացքներում առաջ են գալիս կրոնական եւ մշակութային ավանդական արժեքների համահարթեցման վտանգները, որոնք սպառնում են ազգային ինքնություններին, մարդկանց հոգեւոր կերտվածքին, ընտանիքի ավանդական սրբագործված ընկալումներին, աճող սերնդի բարոյականության անաղարտությանը:*

*Մենք հավատում ենք աշխարհում առկա խնդիրների դիմագրավմանը, մարդկության բարօրության ու բարգավաճման ուղղված՝ կրոնների եւ մշակույթների երկխոսությանը: Բոլոր ժողովուրդների համար՝ ազգային առանձնահատկություններով ու ավանդույթներով հանդերձ, ընդհանուր են մարդասիրության, ազնվության ու արդարության արժեքները, ընդհանուր է խաղաղ, ազատ ու երջանիկ կյանքի ձգտումը: Ո՞ր մշակույթում չեն գովերգված հարգանքը, սերն ու աջակցությունը միմյանց հանդեպ, եւ ո՞ր մշակույթում գնահատված ու մեծարված չեն ազնիվն ու առաքինին, մարդկանց համար բարիք գործողները: Մեր՝ հոգեւոր առաջնորդներիս եւ Աստծո Խոսքի բոլոր սպասավորների առաքելությունն է մեր ժողովուրդներին համամարդկային այդ արժեքների մեջ ամրացնելը, հավատքի մեջ զորացնելը, աստվածահաճո ուղիներով առաջնորդելը, որպեսզի այս աշխարհում երկնապարգեւ բարին ու բարիքը առատանան, առաքյալի խոսքի համաձայն՝ «որպեսզի զորության գերազանցությունն Աստծուց լինի եւ ոչ մեզնից» (Բ Կորնթ. Դ 7), քանզի համերաշխության, խաղաղության ու բարօրության համար մարդկային ջանքերն ունայն պիտի լինեն առանց աստվածային զորակցության»:*

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին՝ մեծապես կարեւորելով խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված բոլոր ջանքերը. *«Գտնվելով Բաքվում՝ Մենք այսօր փառք ու գոհություն ենք մատուցում Բարձրյալին, որ շարունակվում են ջանքերը խաղաղ կարգավորման առաջնորդելու համար ղարաբաղյան հակամարտությունը: Այս ուղղությամբ հարկ է կարեւորությամբ ու գնահատանքով նշել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից հետեւողական տարվող աշխատանքները: Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում նաեւ հարցի հանգուցալուծմանն ի խնդիր Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ ի սկզբանե ներդրած միջնորդական ջանքերին: Մեր երկրների իշխանությունները հանրապետությունների նախագահների բարձր մակարդակով նույնպես շարունակում են բանակցային գործընթացը: Ուրախ ենք նաեւ, որ շփումներ կան, եւ երկխոսություն է իրականացվում մեր երկու երկրների քաղաքացիական եւ հասարակական կառույցների ներկայացուցիչների մակարդակով, որի շրջանակում իրականացվում են ֆիլմերի համատեղ նկարահանումներ, երիտասարդական, սպորտային ծրագրեր: Լիահույս ենք, որ ջանքերը պիտի շարունակվեն, որպեսզի հարցի վերջնական կարգավորումը նույնպես ընթանա բացառապես խաղաղ ուղիներով՝ խնդրահարույց հարցերը վճռելով միջազգային օրենքներին ու չափանիշներին համահունչ եւ համապատասխան ժողովուրդների իրավունքների նորմերին: Մենք՝ որպես Հայրապետ Ամենայն Հայոց, կարեւոր ենք նկատում Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի հետ հարցի լուծմանն ի խնդիր մեր ջանքերի ու գործունեության շարունակումը: Մեր պարտականությունն է հորդորել մեր ժողովուրդներին, աջակցել մեր պետությունների նախագահներին՝ խաղաղությամբ ընթանալու դեպի առկա խնդիրների լուծում եւ հարցի վերջնական կարգավորում: Մենք հույս ունենք, որ կովկասյան տարածաշրջանում առկա մարտահրավերների հաղթահարման եւ խաղաղ ու ստեղծագործ կյանքի ապահովության համար համընդհանուր ջանքերը պիտի պսակվեն ցանկալի արդյունքներով, հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների համերաշխ կյանքի ու համագործակցության փորձառությունը վերստին պիտի վերընձյուղվի խաղաղության շիվերով: Մենք աղոթում ենք տեսնելու այն գեղեցիկ օրը, երբ բաց կլինեն բոլոր փակ սահմանները տարածաշրջանում, եւ ազատ՝ տեղաշարժը մարդկանց, ինչպես ժամանակին Մենք առիթ ենք ունեցել այցելելու Բաքու եւ կարճաժամկետ ծառայություն մատուցելու հայկական եկեղեցում: Հավատարիմ մնանք Քրիստոսի առաքյալի պատվիրանին, որը նաեւ կոչ է՝ ուղղված ողջ մարդկությանը. «Խաղաղությո՛ւն արեք. եւ խաղաղության ու սիրո Աստվածը թող լինի ձեզ հետ» (Բ Կորնթ. ԺԳ 11)»:*

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը հրավեր ուղղեց կազմակերպիչներին՝ կրոնապետերի հաջորդ գագաթնաժողովը գումարելու Հայաստանում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Վեհափառ Հայրապետը նաեւ հրավիրեց Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեին՝ այցելելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Այցի ընթացքում տեղի ունեցավ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպում՝ մասնակցությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի:



Հանդիպմանը քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչված հարցեր:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքը եւ Կովկասի մուսուլմանների վարչության նախագահը ստորագրեցին հա[illegible] **հայտարարություն**, որում ասվում է.

*«Հանուն Ամենազոր Արարչի, ի կատարումն մեր ժողովուրդների՝ խաղաղության, բարօրության եւ երջանկության մասին նվիրական երազանքների, մենք՝ ադրբեջանցի եւ հայ ժողովուրդների հոգեւոր առաջնորդներս, Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքի բարձր միջնորդությամբ հանդիպեցինք Բաքվում՝ հավաստելու մեր հարգանքը միմյանց հանդեպ եւ քննարկելու վասն մեր ժողովուրդների ու պետությունների միջեւ արդար խաղաղության եւ համաձայնության ձեռքբերման անհետաձգելի միջոցառումները:*

*Դիտարկելով այս հանդիպումը որպես խաղաղարարական երկխոսության ծավալում՝ Հայ Առաքելական Եկեղեցու եւ Կովկասի մահմեդականների վարչության միջեւ՝ սկիզբ առած 1988 թ. Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջնորդությամբ, հավատարիմ մնալով նախորդ հայտարարությունների ոգուն, մենք հույս ունենք հետագայում եւս աջակցելու մեր ժողովուրդների խաղաղ համագոյակցության սկզբունքների առաջխաղացմանը եւ փոխընդունելի որոշումների մշակմանը՝ բացառապես բանակցային ճանապարհով: Ուրախալի է վկայել, որ նման ձեւաչափով հանդիպումները քիչ չեն նպաստել Ղարաբաղի խնդրով ծագած հայ-ադրբեջանական զինված հակամարտության դադարեցմանը: Այս հանդիպումները, անկասկած, օգնել են խուսափելու հակամարտությունը միջկրոնական դիմակայության վերածվելուց:*

*Այսօր հատկապես կարեւոր ենք համարում համագործակցության հոգեւոր կողմնորոշիչներին հետեւելը՝ մեր ժողովուրդների միջեւ առկա խորթությունը հաղթահարելու համար: Կրոնի ուժը, որ կոչում է բարու, խաղաղության, կարեկցանքի, համբերության, պիտի դառնա հաշտեցման գործոն: Հավատում ենք, որ մեր համատեղ ջանքերը կնպաստեն հաղթահարելու ազգամիջյան թշնամությունը: Կենսականորեն անհրաժեշտ է թույլ չտալ ռազմական ճանապարհով վիճահարույց հարցերի լուծման վերադարձը: Մեր խաղաղարարական ջանքերով պետք է սատար կանգնենք մարդկանց՝ ներկայիս բաժանումների, պատնեշների եւ թշնամության վերացման հույսերին, քանզի պատերազմը, եթե այն շարունակես, ավարտ չի ունենա:*

*Մենք սատարում ենք հակամարտության կարգավորմանն ուղղված միջազգային ջանքերը: Խաղաղության եւ բարիդրացիության հասնելու համար անհրաժեշտ է ընդլայնել շփումները՝ վստահության ամրապնդման նպատակով: Կայուն խաղաղությունը հնարավոր է միայն բարի կամքի եւ անկեղծ մտադրությունների առկայության պարագայում: Սատար կանգնելով Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների ջանքերին՝ մենք մտադիր ենք աջակցել նրանց ձգտումներին: Այս կապակցությամբ կարեւոր ենք համարում հակամարտության հանգուցալուծմանը նպաստելու նպատակով հոգեւոր առաջնորդների միջեւ ուղիղ երկխոսության շարունակումը, ինչը հնարավորություն կտա մարդկանց վերադառնալու այն վայրերը, որտեղից նրանց քշել է պատերազմը: Մենք ողջունում ենք գերիներին ազատ արձակելու՝ կողմերի բարի կամքը եւ կոչ ենք անում ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական գործիչներին ակտիվացնել ջանքերն այս ազնիվ եւ մարդասիրական գործընթացում: Մեզանից յուրաքանչյուրը պետք է ցույց տա, որ բարի գործերը, ծառայումը գթասրտությանը, նվիրումը խաղաղությանն ու արդարությանը կարող են անել ավելին, քան ռազմական հակամարտությունը: Մենք դատապարտում ենք վանդալիզմի ակտերը եւ կարեւոր ենք համարում մեր ժողովուրդների կրոնական հուշարձանների եւ սրբությունների պահպանումը:*



*Խաղաղության եւ համաձայնության հասնելու ճանապարհը դյուրին չէ, պահանջում է մեծ ջանքեր եւ հզոր կամք: Սակայն մենք ունենք հաջողության հասնելու ջերմ հույսեր եւ, համատեղելով մեր ջանքերը, հույս ունենք հաղթահարելու խորթացումը եւ կանխակալությունները: Պատասխանատվությունն ու պարտքը Բարձրյալի եւ մեր ժողովուրդների առջեւ մղում են մեզ՝ հոգեւոր առաջնորդներիս, ջանքեր գործադրել հանուն խաղաղության, բարու իդեալների երկար սպասված հաղթանակի եւ առկա խնդիրների արդար հանգուցալուծման: Թող Կովկասի բարեբեր հողում ամուր եւ արդար խաղաղություն հաստատվի, իսկ մեր ժողովուրդները ժառանգեն բարօրություն եւ բարգավաճում»:*

Եռակողմ հանդիպումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության խորհրդակցական



մարմնի աշխատանքներին, որի նպատակն է առկա խնդիրների շուրջ երկխոսություն սկսել կրոնական համայնքների եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջեւ: Կրոնապետերը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչին ներկայացրեցին իրենց մտահոգությունները եւ համագործակցության ոլորտները:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Հանդիպմանը ներկա էին Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեն, Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը եւ Տ. Վահրամ քհն. Մելիքյանը:

Մեկ ժամ տեւած հանդիպման ընթացքում, անկաշկանդ եւ անկեղծ մթնոլորտում, խոսվեց Բաքվում գումարված կրոնապետերի համաշխարհային գագաթնաժողովի մասին, եւ կարեւորվեց կրոնների եւ մշակույթների երկխոսությունը՝ ի խնդիր ժողովուրդների՝ ավելի խաղաղ, ապահով ու բարօր կյանքի կերտման: Այնուհետեւ անդրադարձ եղավ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող հարցերին: Այս առումով կողմերը ողջունեցին հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը՝ դրանցում կարեւոր նկատելով կրոնապետերի եւ հոգեւոր սպասավորների դերը: Մեծ նշանակություն տրվեց երկու ժողովուրդների փոխայցելություններին եւ շփումներին, որոնք ավելի պիտի զորացնեն փոխվստահության եւ համագործակցության ոգին:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շքախմբի ուղեկցությամբ, այցելեց Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի, որը ներկայումս գործածվում է իբրեւ գրապահոց: Նորին Սրբությունը ծանոթացավ 1990 թ. հրդեհից վնասված եկեղեցու վիճակին եւ հույս հայտնեց, որ Աստծո ողորմությամբ եկեղեցին վերստին իր դռները կբացի հավատացյալների առջեւ: Ապա տասնամյակներից հետո եկեղեցում հնչեցին հայոց աղոթքն ու շարականը:

Երեկոյան՝ Ադրբեջանի նախագահի կողմից ի պատիվ կրոնապետերի տրված ճաշկերույթից հետո, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Օդանավակայանում Նորին Սրբությանը ճանապարհում էին Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեն, Ադրբեջանի կրոնից նախարարը եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչը:

Բաքվում գագաթնաժողովի աշխատանքներին շարունակեցին մասնակցել Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը եւ Տ. Հովակիմ եպս Մանուկյանը:

# ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Պատարագի ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում ստացան Մայր Աթոռի վանորեից տեսուչ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վրդ. Պռոշյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը:

Ձեռնադրության արարողության ավարտին նորաօծ եպիսկոպոսներին հանձնվեցին նաեւ եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գավազաններ եւ մատանիներ, ինչպես նաեւ Ավետարան՝ ի նշան քարոզչության:

Օծումից հետո Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ուղղեց նորաօծներին եւ ներկա բարեպաշտ ժողովրդին. *«...Տիրոջ հավատացյալ հոտի բարձրաստիճան հոգեւոր սպասավորն է եպիսկոպոսը, ով իր քրիստոնապատվեր առաքելության մեջ կոչված է առավել պատասխանատվությամբ եւ անձնվիրումով ծառայելու Աստծուն, ազգին եւ հայրենիքին... Հայոց պատմության ընթացքում մեր երանյալ հոգեւորականները, Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառ գործիչներ հանդիսացող շնորհառատ եպիսկոպոսները, առաքյալի հորդորի համաձայն, իրենց ծառայության կատարյալ իրագործումով են հովվել մեր բարեպաշտ եւ քրիստոնասեր ժողովրդին, տարածել Ավետարանի Բանն Կենաց, հսկել եւ աշխույժ պահել հոգեւորականաց ծառայությունը եկեղեցական անդաստանում, օրինակ եղել իրենց անբասիր հավատքով ու վարքով, արժանահիշատակ բազում գործերով»*,- մասնավորապես շեշտեց Հայոց Հայրապետը:

Ապա Նորին Սրբությունն անդրադարձավ եպիսկոպոսական դասի կարեւոր առաքելությանը մեր օրերում: Հայրապետը նաեւ ուրախություն հայտնեց այն փաստի առիթով, որ իր իսկ հիմնադրած՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը Հայ Եկեղեցու անդաստանում տալիս է իր առաջին եպիսկոպոսները՝ ի դեմս Մկրտիչ եւ Հովակիմ սրբազանների:

Վեհափառ Հայրապետը մաղթեց երեք եպիսկոպոսներին նոր հանձնառությամբ առավել արդյունավորել իրենց ծառայությունը՝ հավելելով պայծառությունը Հայաստանյայց Եկեղեցու՝ ուրախություն ու մխիթարություն բերելով համայն հավատացյալ հայ ժողովրդին:

Այնուհետեւ ներկա բոլոր եկեղեցականները շնորհավորեցին ձեռնադրվածներին:

Պատարագից հետո Հայոց Հայրապետը նորաօծ սրբազաններին նվիրեց եպիսկոպոսական պանակեներ:

Ձեռնադրությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ԱԺ պատգամավորներ Լյովա Խաչատրյանը, Արտակ Զաքարյանը, Արամ Սաֆարյանը եւ Արմեն Մարտիրոսյանը, ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ, Արագածոտնի մարզի իշխանությունների ներկայացուցիչներ, բարերար հայորդիներ, ձեռնադրյալների բարեկամները եւ ուխտավորներ:

Առաջիկա օրերին նորաօծ եպիսկոպոսներն ուխտի պատարագներ կմատուցեն Մայր տաճարում:

### Տ. Արտակ եպս Տիգրանյան



Ծնվել է 1971 թ. ապրիլի 12-ին Արտաշատի շրջանի Դիմիտրով գյուղում, սովորել տեղի ռուսական թեքումով միջնակարգ դպրոցում: 1988 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Հոգեւոր ճեմարան: 1993 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1994 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Խաչվերացի տոնի ավանդությունը» թեմայով: 1994-95 թթ. եղել է Գանձատան պատասխանատու տնօրենը: 1995 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1995-99 թթ. եղել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձնական քարտուղարն ու գավազանակիրը: 1999 թ. հոկտեմբերի 8-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանց. կյանքը եւ հոգեւոր-գիտական գործունեությունը» թեմայով: Նույն թվականին ստացել է վարդապետական գավազան կրելու մասնավոր աստիճան: 1999-2000 թթ. ծառայել է Փարիզի հայոց Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում: 2000-2001 թթ. Մայր Աթոռի լուսարարապետի օգնականն էր, իսկ 2001-2005 թթ.՝ լուսարարապետի պաշտոնակատար: 2006-2008 թթ.՝ Գուգարաց թեմի փոխառաջնորդ եւ Հաղպատի վանահայր: 2008-2009 թթ.՝ կրկին Մայր Աթոռի լուսարարապետի օգնական: 2009 թ. նշանակվել է Մայր Աթոռի վանորեից տեսուչ:

### Տ. Մկրտիչ եպս Պռոշյան

Ծնվել է 1975 թ. օգոստոսի 13-ին Էջմիածին քաղաքում, սովորել տեղի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: 1985-1990 թթ. հաճախել է Էջմիածնի Ե. Թադեւոսյանի անվան նկարչական դպրոց: 1991-1993 թթ. եղել է Հայ Եկեղեցու երիտասարդաց միության՝ Էջմիածնի մասնաճյուղի ատենապետը: 1993-1998 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, ապա՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ջ լսարանում: 1999 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1999-2001 թթ. աշխատել է Հայ Եկեղեցու ՔԴՔԿ-ում: 2000 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Խոսրով Անձեւացու «Պատարագի մեկնության» աստվածաբանությունը» թեմայով: 2001 թ. նրա թարգմանությամբ (գրաբարից) լույս են տեսել Խոսրով Անձեւացու «Պատարագի մեկնություն» աստվածաբանական եւ Վարդան Այգեկցու «Խրատ բոլոր քահանաներին» քարոզխոսական երկերը: 2001 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 2001-2003 թթ. սովորել է Լիցցի համալսարանում՝ ստանալով BA աստիճան, եղել Մանչեստրի հայկական համայնքի այցելու հովիվը: 2003-2004 թթ. սովորել է Քարդիֆի համալսարանում՝ ստանալով MTh աստիճան:



2004 թ. նշանակվել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում՝ որպես տեսուչի պաշտոնակատար, իսկ 2005-2008 թթ.՝ դպրանոցի տեսուչ: 2004-2008 թթ. վարդապետական աստվածաբանություն է դասավանդել Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում եւ Սեւանի Վազգենյան դպրանոցում: 2006 թ. պաշտպանել է «Ֆեմինիստ փրկաբանության վերլուծության փորձ» թեմայով վարդապետական թեզ եւ արժանացել մասնավոր վարդապետական գավազանի: 2007-2008 թթ. սովորել եւ ավարտել է Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցը: 2008 թ. նշանակվել է Ֆիլադելֆիայի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ հայկական եկեղեցու առժամյա հոգեւոր հովիվ: 2009 թ. Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահն է:

### Տ. Հովակիմ եպս Մանուկյան



Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 19-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում, սովորել տեղի միջնակարգ դպրոցում: 1994-1999 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, ապա՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ջ լսարանում: 1998 թ. սովորել է ԵՀԽ Բոսսեի (Շվեյցարիա) Էկումենիկ դպրոցում: 2000 թ. ձեռնադրվել է սարկավագ: 2000 թ. աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնում: 2001 թ. սովորել է Դանիայի Արհուս քաղաքի Դիակոնալ դպրոցում՝ ուսումնասիրելով սոցիալական աստվածաբանություն: 2001 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Դրվագներ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պատմությունից» թեմայով: 2001 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 2002-2004 թթ. ուսանել է Մոսկվայի հոգեւոր ակադեմիայում (Սերգիեւ Պոսադ)՝ ստանալով աստվածաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2004 թ. կրկին ծառայության է անցել Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնում, իսկ 2005-ից Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչն է: 2006 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Էկումենիզմը 20-րդ դարում եւ Հայ Եկեղեցին» թեմայով եւ ստացել մասնավոր վարդապետության չորս աստիճանները: 2008- 2009 թթ. հաճախել է Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոց: 2004 թ. Ընդհանրական եւ Հայ Եկեղեցիների պատմություն է դասավանդում Գեւորգյան հոգեւոր ճեմարանում եւ Սեւանի Վազգենյան դպրանոցում: 2005 թ. ԵՀԽ հայաստանյան բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է: 2004-2009 թթ. եղել է Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի անդամ: 2009 թ. Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի կենտրոնական կոմիտեի անդամ է: 2004-ից ԵՀԽ Էկումենիկ պաշտոնյաների ցանցի անդամ է: Մասնակցել է 2006 թ. Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում տեղի ունեցած ԵՀԽ 9-րդ համագումարին, 2007 թ.՝ Ռումինիայի Սիբիու քաղաքում համաեվրոպական երրորդ էկումենիկ ասամբլեային եւ 2009 թ.՝ Լիոնում կայացած Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի 13-րդ համագումարին: Հրապարակել է հայերեն եւ անգլերեն մի շարք հրապարակախոսական, գիտական եւ ջատագովական երկեր ու հոդվածներ:

## Սբ Հովհան Օձնեցու ուխտի օրը

Ամեն տարի՝ ապրիլի 17-ին, Գուգարաց թեմը մեծ հանդիսավորությամբ նշում է Սբ Հովհան իմաստասեր Օձնեցի հայրապետի ուխտի օրը:

Այս տարի եւս, թեմակալ առաջնորդ Տեր Սեպուհ եպս Չուլջյանի օրհնությամբ եւ առաջնորդությամբ, հազարավոր ուխտավորներ Օձունում մասնակցեցին սրբի հիշատակությանը նվիրված պատարագին եւ ապա այցելեցին Արդվի գյուղի բարձունքում գտնվող նրա շիրմին:

Վանաձորից, Սպիտակից, Ալավերդուց, Տաշիրից, Ստեփանավանից, Հաղպատից, Մարգահովտից, Երեւանից, Արարատից, Գյումրիից բազում ուխտավորներ՝ իրենց հոգեւոր հովիվների առաջնորդությամբ, առաջինը հանգրվանեցին Օձունի Սբ Աստվածածին եկեղեցում, ուր հաղորդությամբ մասնակից դարձան պատարագին: Պատարագիչն էր Օձունի հոգեւոր հովիվ Տեր Վրթանես քհն. Բաղալյանը:

Պատարագից հետո գյուղապետ Արսեն Տիտանյանի կողմից հավատացյալներին բաժանվեց ուխտի մատաղ, ապա Օձունի կիրակնօրյա դպրոցի սաներն իրենց կատարումներով ելույթ ունեցան Օձնեցու արձանի մոտ: Թեմակալ առաջնորդը սրբի մատուռի մոտ իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց բոլոր ուխտավորներին:

Օձունից ուխտավորները մեկնեցին Արդվի, ուր ամփոփված է սրբի աճյունը: Սրբազան հոր գլխավորությամբ եւ հոգեւոր հայրերի մասնակցությամբ՝ Օձնեցու շիրմին կատարվեց մաղթանքի արարողություն:

Ուխտագնացությանը մասնակցում էին նաեւ Գուգարաց թեմի Եկեղեցասեր երիտասարդաց միության անդամներ, տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՎՊՄԻ-ի ուսանողներ:

*Դիվան Գուգարաց թեմի*

## ԽԱՂ–ՎԻԿՏՈՐԻՆԱ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ապրիլի 15-ին Արմավիրի թեմի երիտասարդաց միությունը եւ մարզի կրթության վարչությունը կազմակերպել էին խաղ-վիկտորինա՝ Հայ Եկեղեցու պատմություն առարկայից: Խաղը տեղի ունեցավ Արմավիրի թիվ 5 միջն. դպրոցի մարզադահլիճում:

Խաղին մասնակցում էին Արմավիր քաղաքի 8 միջնակարգ դպրոցների աշակերտներ: Մասնակիցներին ողջունեց եւ իր օրհնությունը տվեց Մեծամորի Սբ Ղազար եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Տաթեւ քհն. Կիրակոսյանը:

Ժյուրիի անդամներն էին Տ. Տաթեւ քհն. Կիրակոսյանը, Արմավիրի թեմի ՔԴԿ-ի պատասխանատու Ռուզաննա Հարությունյանը, մարզպետարանի կրթության բաժնի աշխատակիցներ Նաիրա Սարգսյանը եւ Արտակ Առաքելյանը, Արմավիրի երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնի տնօրեն Արգամ Արշակյանը:

Առաջին պատվավոր տեղին արժանացավ թիվ 8 միջն. դպրոցը, երկրորդ տեղում էր Ռուբիկ Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոցը, իսկ երրորդ տեղում՝ Վարդան Բախշյանի անվան թիվ 2 միջն. դպրոցը: Հաղթողներին թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս Ադամյանի կողմից հանձնվեցին մրցանակներ:




Խաղ-վիկտորինայի հաջողության մասին է խոսում նաեւ այն, որ Արմավիր քաղաքի հարակից գյուղերի դպրոցները նույնպես ցանկություն են հայտնել մասնակցելու նման խաղ-վիկտորինայի: Այժմ Ամավիրի թեմի երիտասարդաց միությունը պատրաստվում է կազմակերպել նաեւ միջգյուղական վիկտորինա Հայ Եկեղեցու պատմություն առարկայից:

*Արմավիրի թեմի երիտասարդաց միություն*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԴԱՎԻԹ Դ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ (1590-1629?)

*Սկիզբը՝ թիվ 4-7*

Դավիթ կաթողիկոսը հովվապետություն էր անում Էջմիածնում, չնայած այն բանին, որ Ամիրգունեան նրան հաշտ աչքով չէր նայում: Մելքիսեդեկը մնում էր Սպահանում, գործում էր իբրեւ կաթողիկոս, թեեւ դրա իրավունքը շահը նրան չէր տվել: Ավետիսն ավելի ուշ կրկին հայտնվել էր Էջմիածնում: Շուտով պատերազմ ծագեց թուրքերի եւ պարսիկների միջեւ: Թուրքական զորքերը գլխավորում էր Էոքյուզ Մեհմեդ փաշան, որը 1616 թվի գարնան սկզբին շարժվեց դեպի Նախիջեւան եւ այն գրավեց 40-օրյա պաշարումից հետո: Մի քանի անգամ հաղթելով պարսիկներին՝ նա շարժվեց դեպի Երեւան, որը պաշտպանելու համար զորքով ընդառաջ գնաց Շահ-Աբասը: Նա հաստատվեց Գառնիի կողմերում, նեղեց թուրքերին, որոնք չկարողացան ընկճել Երեւանի պաշտպաններին: Թուրքերը ետ դարձան Կարին: Դրանից օգտվելով՝ Դավիթը ներկայացավ շահին եւ գանգատվեց Ամիրգունայից եւ պատմեց Մելքիսեդեկի խարդավանքների մասին: Շահը նրան լավ ընդունեց, բայց Ամիրգունային չպատժեց, քանի որ կարող պաշտոնյա էր, սակայն ամբողջ ցասումը թափեց Մելքիսեդեկի վրա: Շահի կարգադրությամբ նրան ձերբակալեցին Գանդիման գավառի Քաթակ գյուղում եւ շղթայակապ բերեցին Վայոց ձոր, որտեղ այդ ժամանակ գտնվում էր շահը: Դավիթն էլ, տեսնելով, որ շահը հարցը քնեցնում է, շահից իրավունք խնդրեց Սպահան գնալու, ինչը նրան արտոնվեց, եւ նրան հասույթ տրվեց Ջղախառ գավառի Ֆռնդիկան գյուղը: Դա տեղի ունեցավ 1617 թվին:

Շահը հետո գնաց Նախիջեւան, ապա՝ Ագուլիս: Այս ամբողջ ընթացքում Մայր Աթոռն անտերունչ վիճակում էր: Աչքի առաջ ավերվում էր հայոց մայր եկեղեցին:

Շահ-Աբասը սիրում էր, որ իրեն հանդեսներով ընդունեն. ինչը եւ անում էր ժողովուրդը՝ իր կամքից անկախ: Ագուլիսում էլ կատարում են այդ պարտադիր հանդեսը, որտեղ դպրատան վերակացու եւ ուսուցիչ էր Անդրեաս Ագուլեցի երիտասարդ ուսյալ քահանան: Ինչպես է պատահում, որ շահը նկատում է, որ ածիլված են երեխաների գլուխները, եւ մտածում է, թե դա դիտմամբ է արված, որ ինքը դրանցից որեւէ մեկին չվերցնի: Այս ավանդույթը տեղ էր գտել հայերի շրջանում կաթոլիկների ազդեցությամբ: Ածիլվելու հեղինակին գտնելու համար հարցաքննում են Անդրեաս քահանային: Եվ նա, որպեսզի ուրիշ մեկին չմեղադրեն, ինքն իրեն ամբաստանում է: Նրան ձերբակալում են, տանջում, առաջարկում հավատը փոխել: Նա չի համաձայնվում: Շահը ոչ մի միջամտություն չի ընդունում, նույնիսկ չի լսում խոջա Անձրեւի կնոջ խնդրանքը, որին նա մայր էր անվանել: Ի վերջո որոշում են սպանել Անդրեասին: Ծնողները նրան արիության կոչ են անում: Պատռում են նրա որովայնը, կտրում են ոտքի ջլերը եւ գլխիվայր պահում մինչեւ արեւաբացը եւ այնուհետեւ կախում: Դա տեղի է ունեցել 1617 թվի նոյեմբերի 18-ին: Անդրեասը թաղվեց Ագուլիսի Խցաձորի եկեղեցում:

Անդրեասից հետո մահմեդական մոլեռանդության զոհ դարձան Մովսես վարդապետը Տաթեւից եւ Պողոս վարդապետը Աստապատից: Ագուլեցի Շահռուզ բեկը, որ քրիստոնյատյաց էր, Շահ-Աբասին հայտնում է, որ Անդրեասն այդպես է վարվել Տաթեւի Մովսես վարդապետի թելադրանքով, եւ որ միեւնույն ուղղության է հետեւում Աստապատի Պողոս վարդապետը: Շահի հրամանով երկուսն էլ ձերբակալվում են: Մովսեսի մասին վերը նշել ենք, որ Կեսարիայում, Կ. Պոլսում, Դիարբեքիրում, Վանում եւ Թավրիզում լինելուց հետո վերադարձել էր Տաթեւ եւ շարունակել իր հոգեւոր գործունեությունը: Նրա գլխավոր նպատակն էր շրջագայել քաղաքներում ու գյուղերում եւ քարոզել: Նա իր շուրջն էր հավաքում երեխաների՝ իրեն աշակերտելու համար: Ինչ վերաբերում է Պողոս վարդապետին, ապա նա բնիկ Մոկացի էր՝ Բար գյուղից: Աշակերտել էր Վարագա վանքում՝ Կարապետ Ձագ վարդապետին, եւ իրեն նվիրել քարոզչությանը:



Սրանց համար շատ խնդրանքներ եղան: Շահը միտք ուներ նրանց նահատակել, բայց հավանաբար Անդրեասի եղերական մահից հետո միտքը փոխել էր: Նա որոշեց նրանց համար 500 թուման տուգանք գանձել, բայց հետո ազդվելով իր զորականների խնդրանքներից՝ այն իջեցրեց 300-ի: Վարդապետներն աղքատ էին, ուստի զինվորականներն սկսում են հանգանակություն հավաքել: Իսկ մարդիկ նրանց փրկելու համար տալիս էին վերջին գրոշը: Հավաքվեց 700 թուման, որի շնորհիվ այլ բանտարկյալներ էլ ազատվեցին: Պողոսը եւ Մովսեսը ազատվեցին, բայց ամբաստանիչ Շահռուզ Ագուլեցին շուտով սպանվեց, որ կարծես թե աստվածային պատիժ էր՝ իր նողկալի մեղադրանքի համար: Մելքիսեդեկը տուգանքի համար նույնպես ձերբակալված էր, սակայն նա վարդապետների բախտը չունեցավ: Շահը գնաց Դանղ, այնուհետեւ՝ Սպահան, իսկ Մելքիսեդեկին շղթայակապ տանում էին նրա հետ: Նրան տուգանել էին 300 թումանով՝ երեք մեղքերի համար. սբ Հռիփսիմեի նշխարները կաշառքով ծախելը, առանց հրամանի Մուշկունից ետ դառնալը եւ Սպահանում կաթողիկոսություն անելը: Որքան հայերն առատաձեռն էին Մովսեսի եւ Պողոսի համար, այնքան անտարբեր էին Մելքիսեդեկի հարցում: Բոլորը նրան հասկացնում էին, որ այլ ճանապարհ չկա. պետք է վճարել եւ ազատվել: Ուստի հուսահատված Մելքիսեդեկը շահին խնդրեց իրեն ազատել, որ կարողանա գումարը գտնել: Շահին դա դուր եկավ: Նա նրան կաթողիկոսությունը վարելու հրովարտակ տվեց եւ տուգանքն ստանալու նպատակով ազատ արձակեց: Այժմ Մելքիսեդեկը համարձակ շրջում էր եւ փորձում փող հանգանակել:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

## Պատկերագրությունը, հոգեւոր խորհուրդը, ժողովրդական արարողությունը

Քրիստոսի համբարձման մասին գրում են Մարկոս եւ Ղուկաս ավետարանիչները:

Համբարձման մասին գրված է նաեւ «Գործք առաքելոցում», եւ նշվում է, որ համբարձումը տեղի է ունեցել Ձիթենյաց լեռան վրա:

Համբարձման նկարներում՝ Ձիթենյաց լեռան վերեւում, պատկերվում է համբարձվող Քրիստոսը՝ աստվածության փառքը խորհրդանշող ճվածիրի մեջ:

Համբարձվող Քրիստոսին դեպ աստվածային անհաս բարձունքներն են ուղեկցում հրեշտակները:

Նկարի ներքեւի՝ երկրային մասի կենտրոնում Տիրամայրն է: Տիրամոր աջ եւ ձախ կողմերում երկու հրեշտակներ են՝ համաձայն «Գործք առաքելոցի» այն հիշատակության, թե առաքյալներին երեւացին սպիտակ զգեստներով երկու մարդիկ: Տիրամոր աջ եւ ձախ կողմերում առաքյալների երկու խմբերն են, որոնք գլխավորում են Պետրոս եւ Պողոս առաքյալները: Ընդունված պատկերագրությամբ Պետրոս առաքյալն առավել տարեց է եւ սպիտակամորուս, իսկ Պողոս առաքյալը՝ թուխ մորուսով եւ լայնաճակատ ու ճաղատ:

Պողոս առաքյալին պատկերելը ժամանակային առումով անհամապատասխանություն է ստեղծում, քանի որ նա առաքյալների շարքը դասվեց հոգեգալստից եւ Ստեփանոս Նախասարկավագի քարկոծումից հետո: Պողոս առաքյալին պատկերելը, սակայն, արդարացվում է խորհրդաբանական առումով, քանի որ Պետրոս առաքյալի գլխավորած խումբը խորհրդանշում է Հին Ուխտից եկող քրիստոնյաներին, իսկ Պողոս առաքյալը՝ նորադարձներին, հեթանոսությունից հավատքի եկածներին:

Պատկերագրական մի այլ խմբի պատկանող նկարներում ժամանակային այս անհամապատասխանությունից խուսափելու համար առաքյալների երկու շարքերը ներկայացվում են մինչ խաչելությունն ընկած շրջանի համար ընդունված երկու շարքերով, որոնք գլխավորում են Պետրոս առաքյալը եւ Հովհաննես ավետարանիչը:

Համբարձման հայտնի հնագույն պատկերը 5-6-րդ դարերով թվագրվող բամբերգյան հարթաքանդակն է, ուր հարությունը եւ համբարձումը իրար հաջորդող ընթացքով պատկերվում են միասին: Ներքեւում յուղաբեր կանայք են, որոնց օրհնում է Քրիստոսը: Այստեղ եւս թափուր գերեզմանի փոխարեն ներկայացվում է նրա վրա բարձրացած Ս. Հարության տաճարը: Վերեւում գերեզմանի պահպանության համար կարգված շփոթահար զինվորներն են:

Պատկերի վերին մասն արդեն ներկայացնում է համբարձումը՝ իր վաղ եւ դեռեւս չձեւավորված պատկերագրությամբ: Ձիթենյաց լեռան ստորոտին շփոթահար առաքյալներն են, եւ լեռնալանջն ի վեր ելնում է Քրիստոսը՝ դեպի երկինք բարձրանալու համար բռնելով երկնակամարից վար պարզված աստվածային Աջը:

Պատկերագրական այս ձեւի հետ հետաքրքրական զուգահեռներ է գծում Վասպուրականում 1319 թ. գրված Ավետարանի հետեւյալ մանրանկարը, ուր ներքեւում դարձյալ հարության պատկերն է՝ յուղաբեր կանանցով, թափուր գերեզմանը խորհրդանշող Ս. Հարության տաճարով, շփոթահար պահապաններով, իսկ հարուցյալ Քրիստոսն արդեն ներկայացվում է երկինք համբարձվելիս:

Դարձյալ հինգերորդ դարով է թվագրվում Հռոմի Սաբինայի եկեղեցու այն փորագրապատկերը, ուր Քրիստոսը գտնվում է դափնեպսակով պատված շրջագծի մեջ, որի չորս կողմերում չորս ավետարանիչների խորհրդանիշներն են:

«Ես եմ Ալֆան եւ Օմեգան» խոսքերի հետեւողությամբ Քրիստոսի աջ եւ ձախ կողմերում «A» եւ «O» տառերն են:

Քրիստոսը պատկերված է աստվածային անհաս բարձունքներում, իսկ ներքեւում տարածվում է տեսանելի երկինքը՝ արեգակով, լուսնով եւ աստղերով:

Պատկերի այս՝ ներքեւի մասի կենտրոնում Տիրամայրն է: Տիրամոր աջ եւ ձախ կողմերում Պետրոս եւ Պողոս առաքյալներն են, ովքեր հավաքաբար ներկայացնում են առաքյալների երկու խմբերը: Նրանք Տիրամոր գլխավերեւում պահել են քրիստոնեության խորհրդանիշ խաչը: Քանի որ Տիրամայրը խորհրդանշում է քրիստոնեական Եկեղեցին, ուստի որոշ հետազոտողներ ենթադրում են, որ այստեղ ներկայացված է Եկեղեցու թագադրումը հրեից եւ հեթանոսաց առաքյալների ձեռքով:



Համբարձման տեսարանի ձեւավորված պատկերագրությունը գտնում ենք 518 թ. գրված Ռաբուլայի Ավետարանի համբարձման մանրանկարում: Ճվածիրում գտնվող Քրիստոսն աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախով պահել է Ավետարանը խորհրդանշող գալարափաթեթը: Երկու հրեշտակները պահել են ճվածիրը, իսկ եւս երկու հրեշտակ հաղթության պսակն է ընծայում Փրկչին:

Պատկերագրական կանոնի հետագա զարգացմամբ՝ հաջորդող շրջանի մանրանկարներում այդ երկու հրեշտակները ճվածիրի ստորին մասը պահած են պատկերվում:

Միջնադարյան խորհրդաբանությամբ Հին եւ Նոր Կտակարանները գտնվում են շարունակական զուգահեռի մեջ, եւ Հին Կտակարանում ասվածները՝ որպես կանխասացություններ, կատարվեցին Նոր Կտակարանում: Նույն այս համաբանությամբ Քրիստոսը պատկերվում է հրեշտակներով շրջապատված երկինք համբարձվելիս՝ համաձայն Դավթի սաղմոսների այն տողի, թե «Ելավ նա քերովբեների վրա ու թռավ, սլացավ հողմերի թեւերով» (ԺԷ 11):

Հին Կտակարանի հետ այս զուգահեռով Քրիստոսի համբարձումը համեմատվում է Եղիայի համբարձման հետ:

Հին Կտակարանի «Թագավորաց Չորրորդ» գրքում ասվում է, որ Եղիան Եղիսեի հետ մինչ լեռն էր բարձրանում, «մի հրեղեն կառք ու հրեղեն երիվարներ երեւացին, նրանց միմյանցից բաժանեցին, եւ Եղիան պտտահողմի մեջ դեպ երկինք վերացավ» (Դ Թագ. Բ 16):

Եզեկիելի մարգարեության մեջ այս կառքն անվանվում է չորեքկերպյան՝ չորս կենդանակերպերով՝ մարդ-հրեշտակ, առյուծ, եզ եւ արծիվ: Ահա նույն ձեւով Ռաբուլայի Ավետարանում Քրիստոսը երկինք է համբարձվում չորեքկերպյան այս կառքի վրա:

Քրիստոսի համբարձումը հրեղեն կառքի հետ տարվող այս զուգահեռով է ներկայացնում իտալացի նշանավոր նկարիչ Ջոտտոն՝ Պադուայի տաճարի 1304-1306 թթ. կատարած որմնանկարների շարքում:

Քրիստոսն այստեղ թեեւ առարկայորեն կառքի վրա չէ, սակայն ամպի վրա՝ ասես կառքի վրա վեր է սլանում, իսկ կառքով վեր ելնող Եղիան պատկերված է համբարձման որմնանկարի լուսանցքում:

Ջոտտոյի այս որմնանկարում հրեշտակները քսանչորսն են, որը խորհրդանշում է օրվա քսանչորս ժամերին հրեշտակների հանապազ շարունակական օրհնությունը:

Ռաբուլայի Ավետարանում՝ պատկերի ներքեւի մասում՝ Ձիթենյաց լեռան համապատկերի վրա՝ կենտրոնում, դարձյալ Տիրամայրն է՝ աջ եւ ձախ կողմերում երկու հրեշտակներ եւ առաքյալների երկու դասերը՝ ձեռքերում Ավետարանը պահած Պողոս եւ ձեռքին խաչափայտ՝ Պետրոս առաքյալների գլխավորությամբ:

Համբարձման տեսարանը հայ արվեստում արդեն գտնում ենք VI դարում Պտղնիի եւ Օձունի հարթաքանդակներում: Համբարձման պատկերը կա նաեւ հայկական նկարազարդված ամենահին ձեռագրում՝ Մլքե թագուհու՝ իններորդ դարում գրված Ավետարանում:

*Շարունակությունը՝ էջ 6*



# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Սկիզբը՝ էջ 5

Այստեղ Հիսուսը ծվածիրի մեջ բազմած է գահին, աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախով պահել է գալարափաթեթ: Այստեղ եւս հրեշտակները հանդիսավոր հիմներգությամբ ուղեկցում են համբարձվող Փրկչին:

Ներքեւում Պողոս եւ Պետրոս առաքյալներն ասես իրենց խոնարհումն են բերում Եկեղեցու խորհրդանիշ Տիրամորը:

Համբարձման ամբողջական պատկերագրությունը գտնում ենք 11-րդ դարում գրված Մուղնու Ավետարանում:



Այստեղ եւս չորս հրեշտակները ոչ թե բարձրացնում են ծվածիրը, այլ ուղեկցում են հանդարտորեն ճախրելով վեր բարձրացող Քրիստոսին: Ինչպես այս, այնպես էլ մի շարք այլ մանրանկարներում Ձիթենյաց լեռան փոխարեն պատկերվում են այն խորհրդանշող ձիթենիները:

Ավետման, հարության եւ Տիրամոր վերափոխման նման այստեղ եւս երկու հրեշտակները պատկերվում են հաղթության պսակ բրաբիոնով, որովհետեւ այստեղ էլ նրանք առաքյալներին տալիս են իրենց Ուսուցչի՝ երկինք համբառնալու ավետիսը:

Հրեշտակների հայացքը, ընդունված պատկերագրության համաձայն, այստեղ եւս ուղղված է առաքյալների երկու խմբերին, որով մեկ անգամ եւս շեշտվում է, որ Տիրամայրը Եկեղեցու խորհրդանիշն է, եւ դեպ նրան են դիմում առաքյալների երկու խմբերը:

Տիրամոր՝ Եկեղեցին խորհրդանշելը մանրանկարների մի խմբում արտահայտվում է Տիրամորը խորանում որպես կառույց պատկերելով: Այս գաղափարը երբեմն շեշտվում է անգամ Տիրամոր հանդերձների ընդգծված ճարտարապետական ոճավորմամբ ու գծագրմամբ: Տիրամոր թիկնոցն այդ մանրանկարում խորանաձեւ կտրվածք ունի, որը խորհրդանշում է, որ Տիրամայրը որպես խորան լույս իրենում կրեց մարդկության Փրկչին:

Որպես Եկեղեցու խորհրդանիշ՝ Տիրամայրը որոշակիորեն առավել մեծ եւ առաքյալների երկու խմբերից հավասարաչափ հեռավորության վրա է պատկերվում:

Մուղնիի Ավետարանում թեեւ ոչ այնքան ցայտուն ձեւով, սակայն արդեն ձեւավորված պատկերագրական կանոնով առաքյալները



պատկերվում են ձեռքերը վեր պարզած. թե՛ որպես երկրպագություն եւ թե՛ որպես հիացման ու համբառնալը ցույց տալու արտահայտություն:

Կառուցվածքային առումով պատկերագրական որոշակի ընդհանրություն կա պայծառակերպության եւ համբարձման մանրանկարների միջեւ հետեւյալ պատճառով: Պայծառակերպությունը նույնպես տեղի ունեցավ լեռան վրա: Պայծառակերպության ժամանակ եւս Քրիստոսը լեռը բարձրացավ առաքյալների հետ: Երկու դեպքում էլ աշակերտներն ականատես եղան եւ ցնցվեցին Աստվածության փառքից:

Ահա այս պատճառով պայծառակերպության պատկերները որոշակի ազդեցություն են թողել համբարձման տեսարանի պատկերագրական մի խմբի վրա, ուր, ինչպես պայծառակերպության ժամանակ, լեռան վրա երեք առաքյալներն են եւ ապշահար նայում են համբարձվող Փրկչին: Այս ընդհանրությունն առավել է շեշտվում նկարի «առաքեալքն պշուցեալ հայէին» (առաքյալները ապշահար նայում էին) մակագրությամբ:

Նաեւ եթե Թաբոր լեռան վրա Հիսուսի աջ եւ ձախ կողմերում Մովսեսն ու Եղիան էին, ապա համբարձման ժամանակ՝ Հիսուսի երկու կողմերում եղող հրեշտակները, որով առավել է մեծանում երկու պատկերների միջեւ եղած ընդհանրությունը:



Այս պատկերի վերեւում եթե գրված չլիներ «Համբարձումն», թերեւս անգամ կարելի էր կասկածել, թե սա արդյոք համբարձմա՞ն, թե՞ պայծառակերպության պատկերն է:

*Շարունակելի*

***Վարդան ԴԵՎՐԻԿՅԱՆ***

***Բանասիրական գիտ. թեկնածու***

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԴԱՎԻԹ Դ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ

## (1590-1629?)



Սկիզբը՝ էջ 5

Նա եղավ նախ Տփղիսում, հետո՝ Թավրիզում եւ Սպահանում:

Էջմիածինն արդեն երկար ժամանակ անտերունչ վիճակում էր: Դավիթը Սպահանում էր, իսկ Մելքիսեդեկը պարզապես շորթիչ էր, որը չէր էլ մտածում Մայր Աթոռի մասին: Նա ամեն տեղ հայ էր փնտրում, որ փող հավաքի: Նա պետական պաշտոնյաների եւ զինվորների օգնությամբ տանջում էր մարդկանց եւ ամեն անթույլատրելի միջոցներով, անգամ բրածեծ անելով, փող էր կորզում: Շահը, սակայն, խորամանկ քաղաքականություն էր վարում: Երբ Մելքիսեդեկն արդեն 800 թուման էր վճարել, շահը հայտարարում էր, որ փող չի ստացել: Մելքիսեդեկը կաշառքով աչք էր փակում ամեն մի ապօրինության վրա: Փող էր վերցնում անարժանների ձեռնադրության, թեմեր տալու, կնաթողության, երկակնության եւ այլ խախտումների համար: Հարկ է նշել, որ Մելքիսեդեկն ուներ իր կողմնակից եպիսկոպոսները, որոնք իրենց վիճակներում գործում էին նույն կերպ: 1619 թվին 100 թումանը գանձելու համար չորս բեկ ուղարկվեց Մելքիսեդեկի մոտ: Վճարել հնարավոր չեղավ, եւ սրանք՝ իրենց յուրայիններով, նստեցին Մելքիսեդեկի վզին: Հարկերը գնալով ավելանում էին կաթողիկոսի վրա: Այս վիճակը տեւեց մինչեւ 1624 թիվը:



Չնայած հրովարտակին՝ Մելքիսեդեկն ընդամենն աթոռակից էր: Դավիթը շարունակում էր բոլորի աչքում մնալ կաթողիկոս, թեպետ գտնվում էր Սպահանում: Մյուս աթոռակից Ավետիսը, կարծես թե, շարունակում էր հովվապետել, համենայն դեպս՝ ըստ Դարանաղեցու: Նա դեռ կենդանի էր 1622 թվի նոյեմբերի 7-ին եւ գտնվում էր Էջմիածնում: Բայց եւ այնպես նրա գործունեության մասին մեզ հիշատակներ չեն պահպանվել: Զաքարիա Քանաքեռցուց հայտնի է, որ նրա խնդրանքով Ամիրգունան հրաժարվում է Մեխլուին ջրախեղդ անելուց: Ավետիսը մահացել է, ըստ Մ. Օրմանյանի, 1620-1624 թթ. միջոցին:

Նշված ժամանակներում հրապարակ եկան մի շարք նշանավոր գործիչներ. Սրապիոն Եդեսացի վարդապետը, որ կաթողիկոս էլ եղավ՝ Գրիգոր ԺԳ անունով, Սրապիոն Օձտեղացի վարդապետը՝ Բաբերդի Վահանաշեն վանքից, Կարապետ Զագ վարդապետը՝ Վարագավանքից, վերոհիշյալ Մովսես Տաթեւացի եւ Պողոս Մոկացի վարդապետները, Սաղմոսավանքի եպիսկոպոս Սարգիս Պարոնտերը, որը եղել էր Մեծ անապատի առաջնորդը, Կիրակոս Պոնտացի քահանան եւ ուրիշներ:

Հատկապես աչքի ընկան Սյունյաց Մեծ անապատի գործիչները: Այստեղ գալիս են շատերը՝ աշակերտելու Սարգիս Պարոնտերին եւ նրա զինակից Կիրակոսին: Դրանցից պետք է հիշատակել Պողոս Մոկացուն, Մովսես Տաթեւացուն: Այդ հոգեւոր հաստատությունը հիմնադրեցին Ջուղայեցի Հախնազարի որդի Հայկազն իշխանը, որին իր զինվորական քաջության համար շատ էր սիրում Շահ-Աբասը, Ներսես Մոկացին՝ Բեղավոր մականունով, Ստեփանոս Մոկացին, Թովմա Տաթեւացին, որ հետո եղավ Շամախիի թեմի եպիսկոպոսը եւ առաջնորդը, Կարապետ Վաղարշապատցի եպիսկոպոսը, Արիստակես Շամբեցին, որ Սարգսից հետո Մեծ անապատի առաջնորդը դարձավ, Արիստակես Բարգուշատցին, որը հետո հիմնեց Տանձափարախի անապատը եւ դարձավ նրա առաջնորդը, Դավիթ Շամքորեցին, որը Չարեքագետի անապատը հիմնեց եւ թեմի առաջնորդ դարձավ, եւ շատ ուրիշներ:

Մեծ կարեւորություն է ներկայացնում Մեծ անապատի կրոնավորների կենցաղի համառոտ նկարագրությունը, որի հիման վրա կարելի է հայ վանականների կյանքի կանոնները ճշտել: Պետք է ճգնակյաց լինել եւ միայն մարմնավոր սեղանին եւ աղոթատեղի գնալ միասին: Անհատական ունեցվածքն արգելվում էր, եւ ամեն ինչ պետք է ընդհանուր լիներ: Առաջնորդի պարտքն էր հոգալ յուրաքանչյուրի պետքերը եւ բաշխել իրավունքը, խցում միաբանը հատուկ ուտելիք չպետք է ունենար, լիներ հնազանդ, առաջնորդի կամքի կատարող, ամբողջ տարին ուտել օրը մի անգամ, արգելվում էր միս եւ գինի օգտագործել, պետք էր պաս պահել որոշակի օրերին, անգամ ուտելիս կարդալ եւ այլն եւ այլն:

Սարգիս Պարոնտերը մնաց Մեծ անապատի առաջնորդը մինչեւ իր մահը: Նրա աշակերտներից Թովմա Տաթեւացին Քշտաղք կամ Աղահեճք գավառում՝ Հոչանց գյուղի մոտ, նոր անապատ հիմնեց: Սարգսից հետո մահացավ Կիրակոս քահանան, իսկ շատ չանցած՝ Հայկազն Հախնազարյանը:

Մեծ անապատի գործիչներից Պողոս վարդապետը Մելքիսեդեկի կողմից դիտվեց արգելիչ անձ իր համար, ուստի կամեցավ նրան լռեցնել: Նա բազմիցս էր նրան սպառնացել՝ փորձելով նրան ստիպել վերադառնալ Մոկք, իբրեւ թե Մոկքն Աղթամարի կաթողիկոսական վիճակ է: Բայց Պողոսը շարունակել էր իր գործունեությունը՝ նաեւ օգտվելով Մելքիսեդեկի կալանավոր վիճակից: Աթոռակից Մելքիսեդեկն ազատվելուց հետո կրկին սկսեց հալածել Պողոսին: Նա, Նախիջեւանում հանդիպելով նրան, պահանջեց իր սահմաններից դուրս գալ: Պողոսն արդեն պատրաստվում էր հեռանալ, երբ Շամբ գյուղի՝ նրանով հիացած բնակիչները թույլ չտվեցին եւ դիմեցին Շահ-Աբասին՝ խնդրելով արտոնագիր: Նա այդտեղից ուղեւորվեց դեպի Արազբար գյուղ, որտեղ գտնվում էր թագավորը: Նրա օրհնանքով մի այլազգի կին, որ ամուլ էր, մեկ տարի անց երեխա է ունենում: Քյոթուկլու գյուղում նա ներկայանում է շահին եւ ստանում փափագած արտոնագիրը: Սակայն Մելքիսեդեկը նրան ամբաստանեց: Նա ձերբակալվեց, սակայն շահը, տեսնելով նրա գիտունությունը եւ վարքը, կարգադրեց Մելքիսեդեկին նրա հետ հաշտվել: Վերջինս, բավարարում չստանալով, դիմեց Թավրիզի իշխանի օգնությանը: Դա էլ չօգնեց: Մելքիսեդեկը դիմեց պարսից իշխանությունների օգնությանը, որից հուսահատված Պողոսը քաշվեց Մեծ անապատ՝ խոստանալով այլեւս չքարոզել: Նա այստեղ զբաղվեց ճգնությամբ եւ մահացավ 1621 թվին:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ-125

## (1885-1920)

*Սկիզբը՝ թիվ 5-7*

Տերյանի սիրերգությունը թեեւ մերժված հոգու երգ է, բայց դրանից նա չի չարանում, ընդհակառակը, ասում է, որ նա աղոթքի պես է ապրում իր հոգում: Ամեն ինչ սիրո նուրբ խաղի մեջ է: «Անջատման երգը» սկսվում է այսպիսի տողերով.

*Դու անհոգ նայեցիր իմ վրա*
*Ու անցար քո խաղով կանացի.*
*Ես քեզնից դառնացած հեռացա,*
*Ես քեզնից հեռացա ու լացի:*

Իսկ «Հրաշք-աղջիկը» այդ անջատման ցավի հուսահատությունից վիրի եզերքին հասած քնարական հերոսի երկրպագության ու մեծարանքի խոսքն է՝ ուղղված աղջկան, որը ներկայանում է այնպիսի գեղեցկությամբ, որպիսին դեռեւս չէր տեսել հայ գրականությունը.

*Հրաշք-աղջիկ, գիշերների թագուհի,*
*Ճառագայթող քո աչքերով դու եկար,*
*Ոսկե բոցով լցրիր հոգին իմ տկար,*
*Հրաշք-աղջիկ, ցնորքների դիցուհի:*

*Կախարդ լուսնի հրապուրող շողի պես*
*Դու ժպտացիր գուրգուրանքով սեթեւեթ,*
*Ազատ սիրտս շղթայեցիր առհավետ,*
*Հրա՛շք-աղջիկ, դո՛ւ միշտ հաղթող եւ*
*միշտ հեզ:*

*Դու մի ցավոտ հիացումի երգ գիտես,*
*Քո ժպիտում կա խորհուրդի մի փայլանք,*
*Քո աչքերում կա մի անանց զմայլանք,*
*Դու չըմեռնող մի վայելքի խոսք գիտես...*

*Հրաշք-աղջիկ, անհայտ երկրի*
*մանուշակ,*
*Գիշերային արեգակի ճառագայթ,-*
*Դու իջնում ես՝ կարող, որպես*
*մահու խայթ,*
*Քնքուշ, որպես անդարձ բախտի*
*հիշատակ...*

Այս գեղեցկուհուն նա դիմում է ե՛ւ հրաշք աղջիկ, ե՛ւ ցնորք աղջիկ, ե՛ւ չքնաղ աղջիկ, ե՛ւ համանման շատ այլ արտահայտություններով: **«Լույսը սեւ է առանց քեզ»**,- ասում է նրան: Բանաստեղծն այդ տեսիլքը սրբացնում է՝ անընդհատ աղոթք ուղղելով նրան. **«Ես վերջին անգամ քեզ եմ աղոթում»**:

Այս հրաշքի առջեւ բանաստեղծը պատրաստ է ինքնազոհաբերմամբ իր սերը խեղդելու, միայն թե տխրություն չպատճառի նրան. **«Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ, / Հավետ քեզ կապված՝ քեզ օտար եմ ես...»**: Միայնության սեւ անապատում աղջկա պայծառ պատկերը երազ է եղել, եղել է **«Անո՛ւրջ, որ գուցե բնավ...»** չի էլ եղել: Նրան դիմում է **«Իմ քույր, իմ դահիճ, իմ սուրբ սիրեկան»** արտահայտություններով: Նա կանգնած է **«որպես անհաղթ հրապույր»**, նրա հայացքը մոգական է, որ **«Բորբոքում է քաղցր դող»**: Նրա շարժումների **«անխոս զրույցում» «Կա խորհրդավոր մի հրապուրանք»**, այդ **«շարժումները աղոթք են շարժում»** եւ անգամ ունեն **«Ինչ որ օծային ինքնահիացում»**:

Ցնորք աղջիկը ե՛ւ մոտիկ է թվում, ե՛ւ հեռու, ե՛ւ հայտնի է, ե՛ւ անհայտ: Մի տեղ ասում է. **«Բայց անհայտ ես դու, դու չունես անուն»**, մեկ այլ տեղ՝ **«Խաղաղ գիշերով դու կըգաս ինձ մոտ, / Քնքուշ ձեռքերըդ ես կըհամբուրեմ...»**: Այս մոտ ու հեռու լինելու մեջ է ամբողջ որոնումը: Մե՛կ նա ասում է. **«Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ»**, մե՛կ իրեն պատկերացնում մեռած. **«Թողեք, որ լինեմ հեռավոր, մենակ.- / Չըզգամ, որ կա սե՛ր եւ ցնո՛րք եւ լա՛ց...»**, մե՛կ սերը շղարշում **«Չարտասանված տխուր խոսքերի»** մեջ, մե՛կ հուշի մեջ ոսկեզօծում նրա կերպարը, մե՛կ կարոտով ու բաղձանքով սպասում նրան. **«Ես նստում եմ ճամփի վրա ամեն օր / Եվ աղոթում եւ թախծում եմ քեզ համար»**: Այդ պահերից մեկն էլ այս է.

*Մի օր առհավետ կյանքըս կանիծեմ*
*Ու գունատ հույսի քայլերով տարտամ*
*Կըգտնեմ ուղին հեռավոր քո տան*
*Եվ թույլ ձեռքերով դուռըդ կըծեծեմ:*

Այս որոնումների մեջ նրան մշտապես հարազատ, սրտակից ու մտերիմ են մնում իրիկնաժամի հոգեհարազատ պահերը: Ստեղծվում է «Մթնշաղ» բանաստեղծությունը, որն ասես սիրո խոստովանություն լինի, բայց ոչ թե ցնորք աղջկան, այլ հոգեպարար այն պահին, որի մեջ բանաստեղծն ասես յուրովի վերագտնում է իրեն.

*Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,*
*Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,*
*Երբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,*
*Ցընորում է կապույտ մութի*
*աշխարհում...*
*Չըկա ոչ մի սահման դնող պայծառ շող,*



*Աղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ*
*մաշող,-*
*Հիվանդ սիրտըդ չի տրտնջում,*
*չի ցավում,*
*Որպես երազ մոռացումի անձավում.*
*Եվ թվում է, որ անզոր է ամեն ինչ -*
*Որ ողջ կյա՛նքդ է մի անսահման*
*քաղցր նինջ...*

Մթնշաղը ոգեւորում է բանաստեղծին, որովհետեւ անուրջների պահն է, ամեն ինչ խորհրդավոր ու խոհուն անցումներով նրան պարուրում է ցնորքների մեջ: Կապույտը երազանքի գույնն է: Անրջական այդ պահը գտնված է, որովհետեւ մարել են օրվա աղմուկները, հեռու են սառն ու օտար մարդկային դեմքերը, եւ հիվանդ սիրտը, որ մշտապես սովոր է ցավ ու տանջանքի, հիմա չի տրտնջում: Այդ պահին ամեն ինչ նրան թվում է անեզր, անսահման, իսկ դառը հեծծանքներով լեցուն կյանքը՝ **«քաղցր նինջ»**:

Տերյանը ներկայացնում է երանության իր զգացողությունը, մթնշաղը բնորոշում է «նրբակերտ» մակդիրով, եւ կյանքը, որն ասես երազ լինի **«մոռացումի անձավում»**, այստեղ ներկայացնում որպես իրական երջանկություն.

*Տխուր կըժպտաս դու հոգնածորեն*
*Ու հոգնածորեն դուռը կբանաս.-*
*Սրտիս մութ ցավը անխոս կիմանաս,*
*Եվ արցունքներըդ հանդարտ կըծորեն:*

*Եվ գթությունը քո քրոջական*
*Սիրտըս կըլցնե խնդության լույսով,*
*Քո սուրբ ծնկները կըգրկեմ հուսով*
*Եվ կըհեկեկամ եւ կըհեկեկամ...*

Այս տառապանքի ապրումներից նա ցանկանում է փրկություն գտնել մոռացումի մեջ: Սա եւս պահ է, որովհետեւ հրաշք աղջկան մոռանալ չի լինի, բայց բանաստեղծի հոգու ճանապարհին անցնում է նաեւ մոռացումի միջով: Չմոռանանք, որ մոռացումի գետ կար հին հունական առասպելաբանության մեջ, այն հոսում էր դժոխքով, եւ նրա անունն էր Լեթա: Տերյանն ահա այդ մոռացումի մեջ է փորձում գոնե ժամանակավոր անդորր գտնել.

*Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,*
*Ամենին մոռանալ.*
*Չըսիրել, չըխորհել, չափսոսալ -*
*Հեռանալ...*

Տերյանի բառապաշարի մեջ շատ են «նուրբ», «մեղմ», «քնքուշ», «անուշ», «խաղաղ», «նազանք» բնորոշումները, որովհետեւ նա կոպիտ իրականությանը հայացք է ուղղում իր հոգին պարուրած այդպիսի զգացողություններով, եւ այդ նույն թափանցիկ ուրվագծերով «նրբակերտ» մթնշաղը շարունակվում է «Երեկո», «Սենտիմենտալ երգ», «Հուշերի երկրում» բանաստեղծությունների մեջ:

Երազանքերի ու անուրջների պահը մշտապես հակադրվում է գորշ ու դաժան իրականությանը, որը հուշի, հեքիաթի արձագանքները ցնդելուց հետո դառնում է սոսկ **«Կյա՛նք, տխուր հովիտ հավիտյան լալու...»**: Իջնում է սեւ գիշերը, **«ցուրտ աչքերով»** ծովն է նայում նրան, եւ **«Իր թելն է մանում անխուսափելին»**: Բանաստեղծը հայտնվում է խավար անդունդներում եւ, որպես ցնորք, դարձյալ աներեւույթ աղջկան է կանչում: Այս աշխարհում քնքշությունը հիվանդ է, հույսը՝ գունատ: Բանաստեղծի կերպարը, որ ձուլվում է քնարական հերոսին, մշտապես երեւում է տառապանքի կնիքը վրան. **«Ես մոլորված մի նավակ, ես անհաստատ մի հոսանք»**, **«Օտար երկիր, օտար հող, թախիծով լի երազներ»**, **«Մի անմեռ ցավ կա երկրում այդ տխուր, / Մի ցուրտ հոգեմաշ հուսահատություն...»**:

Աշնան տխուր ապրումների մեջ գարնան սպասումն էր:

Գարնան զգացողություն Տերյանն ուներ անգամ աշնանային տխուր պատկերների շարքում: «Սենտիմենտալ երգ» բանաստեղծության մեջ մտաբերում է անտառ եւ առու ու բացականչում.

*Արդյոք հիշո՞ւմ ես երկիրը պայծառ*
*Ժպտում էր սիրով հավիտենական.*
*Գարունն էր երգում ձայնով դյութական,*
*Արդյոք հիշո՞ւմ ես. առու էր, անտառ...*

*Շարունակությունը՝ էջ 8*

*Սկիզբը՝ թիվ 7*

# ԽՈՍՔԻ ՀՈԳԻՆ

## ԻՆՉՊԻՍԻՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԽՈՍՔԸ

Քարոզչական աշխատանքներում ոչ միայն հարկ է կիրառել տեղեկատվական եւ հաղորդակցական նորագույն միջոցները, քանի որ դրանք գործում են առավելագույնս օպերատիվ, տալիս են ինտերակտիվության հնարավորություն եւ, որ ամենակարեւորն է, արդի մարդու կենցաղում հաստատվել են ու հիմնավորվել՝ անբաժանելիության աստիճան, այլեւ հարկ է կիրառել հատկապես այդ տեխնոլոգիայի միջոցով իրականացվող ինֆորմացիայի փոխանցման համար ընտրված եւ ժամանակի փորձարկումն անցած ժանրային համակարգը: Արդի մարդուն հասկանալի լեզվով խոսելու մասին այս դիտարկումը եւս հիմնավորենք Պողոս առաքյալի խոսքով. «Իսկ արդ՝ եթե չգիտենամ լեզվի նշանակությունը, օտար կլինեմ նրա համար, ով կխոսի ինձ հետ. եւ նա, ով կխոսի ինձ հետ, օտար կլինի ինձ համար» (Ա Կորնթ. ԺԴ 11):

Ժողովրդամտածողության ընդառաջելու մեծագույն խնդիրներից մեկն էլ այսօր օպերատիվությունն է: Այսօր, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց, մարդը սովոր է բարձրացված հարցերի մասին անմիջական քննարկումներն ու առաջարկված լուծումներն ստանալուն: Եվ առօրյա պահանջ է դարձել ոչ միայն հոգեւոր, այլեւ առօրյա տարբեր իրադարձությունների նկատմամբ կոնկրետ հոգեւոր վերաբերմունքի ցուցաբերումը, ինչը, փաստորեն, լայն հասարակությունը սպասում է հոգեւորականներից ու աստվածաբաններից: Եթե նոր տեխնոլոգիաները տալիս են մեծ լսարանի հետ անմիջական շփում հաստատելու հնարավորություն, ապա հատկապես պատասխանատու գործ է դառնում անմիջական արձագանքը լսարանին ամենաճիշտ ձեւով հաղորդելը: Այս դեպքում էլ հատկապես կարեւորենք խոսքի կազմակերպչական դերը. լսարանը (կլինի դա հեռուստալսարանը, ռադիոլսարանը, պարբերականի ընթերցողների թե համացանցային զրուցընկերների խումբը), որի համար հոգեւորականը կամ աստվածաբանը դարձել է հեղինակություն, կարող է որդեգրել համապատասխան արձագանքը, եւ այդ դեպքում խոսքի կազմակերպչական գործառույթը կարող է նրան որոշակի գործնական քայլերի առաջնորդել: Ահա թե ինչու է հատկապես կարեւոր նախապե՛ս իմանալ ասելիքի նպատակը եւ այն կազմել ըստ մշակված կանոնների, որպեսզի հնարավոր լինի խուսափել անցանկալի կամ անսպասելի հետեւանքներից, ինչպես նաեւ չառերեսվել նախատեսած արդյունքները չստանալու փաստին: «Քանզի եթե շեփորը անորոշ ձայն արձակի, ո՞վ կպատրաստվի պատերազմին» (Ա Կորնթ. ԺԴ 8):



Արդի հաղորդակցության եւ տեղեկատվության կիրառական ձեւերն այսօր հնարավորություն են տալիս հաղորդակցվելու աշխարհի ցանկացած անկյունում գտնվողի հետ՝ ոչ միայն ըստ սեփական ցանկության նրան որոշակի ինֆորմացիա հաղորդելով, այլեւ հետադարձ՝ ինտերակտիվ շփման միջոցով իրեն անհրաժեշտ պատգամը, խրատը, մխիթարությունը կամ զուտ տեղեկությունը փոխանցելով: Կիրառելով յուրաքանչյուր տեխնիկական միջոցի, տվյալ լսարանի եւ թեմայի համար մշակված որոշակի կաղապարը՝ հոգեւոր խոսքը կարելի է գրավիչ դարձնել ոչ միայն այդ խոսքին սպասող, այլեւ ենթագիտակցորեն դրա կարիքն ունեցող ամեն մարդու համար: Այս միջոցներով այսօր առավել քան երբեւէ դյուրին է իրականացնել քարոզչությունը՝ ըստ մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ ավետարանման համար տված պատվիրանների: Եկեք վերհիշենք՝ ինչպես է պետք քարոզել:

*Շարունակելի*

***Կարմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***



# ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ-125
## (1885-1920)

*Սկիզբը՝ էջ 7*

Ահա հոգեւոր վերածննդի այդ անդիմադրելի պահանջով Տերյանը գրում է «Գարուն» բանաստեղծությունը եւ կենսանորոգ տաղերգով ապրեցնում իր հիվանդ հոգին: Գարունը կյանքի հարության ժամանակն է, որ առատորեն պատկերվել է հայ միջնադարյան տարեգրության մեջ: Ահա Տերյանը եւս աշնան մեռնող գույներից անցնում է գարնան հոգեպարար զարթոնքին.

*Գարունը այնքա՛ն ծաղիկ է վառել*
*Գարունը այնպե՛ս պայծառ է կրկին.*
*- Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,*
*Ուզում եմ անուշ փայփայել մեկին:*

*Այնպե՛ս գգվող է երեկոն անափ,*
*Ծաղիկներն այնպե՛ս նազով են փակվում.*
*- Շուրջըս վառված է մի անուշ տագնապ,*
*Մի նոր հուզում է սիրտըս մրրկում...*

*Անտես զանգերի կարկաչն եմ լսում,*
*Իմ բացված սրտում հնչում է մի երգ.*
*- Կարծես թե մեկը ինձ է երազում,*
*Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք...*

Սերը եւ գարունը միշտ էլ անբաժան են եղել իրարից: Գարնան գույնզգույն ծաղիկների ու պայծառ լույսերի մեջ արթնանում է սիրո պահանջը, որ Տերյանը ձեւակերպում է *«անուշ տագնապ»* արտահայտությամբ: Ասես կենարար օդի մեջ կյանքի հոտն է առնում եւ զգում, որ մեկն էլ իրեն է սպասում:

Բանաստեղծությունն ունի հետաքրքրական կառուցվածք: Քառատողերի առաջին երկու տողերում, նախ, նկարագրում է գարունը, գարնան իրիկնաժամը, դեպի կյանք կանչող զանգերի ղողանջը եւ իր հոգում հնչող երգը, այնուհետեւ հաջորդող երկու տողերում շշունջի պես մեղմ հնչեցնում է իրեն պարուրած թանկ ապրումները՝ քնքշորեն սիրելու փափագը, գարնան զարթոնքով պայմանավորված հուզումները եւ այն երազանքը, թե կարծես ինչ-որ մեկն իրեն է երազում ու կանչում: Սա արդեն այն է, ինչի ինքը ձգտել է մթնշաղի անուրջների ժամանակ: Սպասել էր, երազել, աղոթել, բայց ցանկալի հանդիպումը չի կայացել: Հիմա արդեն գարունը նրա առջեւ բացել է կյանքի դռները: Եվ այդ պոռթկուն զգացողությամբ նա պատրաստ է ասելու.

*Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,*
*Զգալ, որ դու կաս եւ լինել հեռու,*
*Երկրպագել քեզ առանց սիրվելու,*
*Երազել միշտ քեզ - լինել քեզ օտար...*

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# Արցախը պատրաստվում է Գանձասարի 770-ամյակի տոնակատարություններին

Այս տարի լրանում է Գանձասարի հռչակավոր վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 770-ամյակը: Այդ առիթով, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի եւ Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանի փոխադարձ համաձայնությամբ, Արցախի աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունները որոշել են Արցախի հոգեւոր-մշակութային կյանքում մեծ կարեւորություն ներկայացնող սույն իրադարձությունը նշել համատեղ բարձր մակարդակով: Տոնական միջոցառումները նախագծելու եւ կազմակերպելու նպատակով, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի հրամանով եւ Պարգեւ սրբազանի օրհնությամբ, կազմվել է կառավարական եւ թեմական համատեղ հանձնաժողով՝ ԼՂՀ փոխվարչապետ, ֆինանսների նախարար Սպարտակ Թեւոսյանի նախագահությամբ:

Հանձնաժողովը, որի կազմում են հոգեւորականներ, ԼՂՀ կառավարության նախարարներ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, դասախոսներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ, մարտի 30-ին գումարեց իր անդրանիկ նիստը, որը վարում էր Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանը:

Նիստի ընթացքում հնչեցին ու քննության առնվեցին առաջիկա միջոցառումների վերաբերյալ առաջարկներ, կազմվեց տոնական միջոցառումների հիմնական ծրագիրը: Մասնավորապես նախատեսվում է մշակութային եւ կրթական միջոցառումների շարք՝ համերգներ, ցուցահանդեսներ, կրթական հաստատություններում տարբեր ծրագրեր, Արցախի, Հայաստանի ու Սփյուռքի հայագետների, պատմաբանների ու ճարտարապետների մասնակցությամբ գումարել գիտաժողով, կազմակերպել ուխտագնացություններ, նկարահանել ֆիլմ, կատարել հրապարակումներ, ստեղծել կայքէջ եւ այլն: Հուլիսի 11-ին՝ Վարդավառի տոնին, Պարգեւ սրբազանի ձեռամբ Գանձասարում կմատուցվի տոնական պատարագ: Տոնական միջոցառումներին նախատեսվում է նաեւ ԼՂՀ Պաշտպանության բանակի ներգրավումը:

Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին կառուցվել է 1216-1238 թթ.՝ Արցախի Ներքին Խաչեն գավառի գահերեց իշխան Հասան Ջալալ Դոլայի կողմից: Եկեղեցու բացումը կատարվել է 1240 թ. հուլիսի 22-ին՝ Վարդավառի տոնի օրը:

***Հայ Առաքելական Եկեղեցու***
***Արցախի թեմ***

# Հալլեի Սբ Հարություն հայկական եկեղեցու օծումը

Ապրիլի 17-ին տեղի ունեցավ Գերմանիայի Հալլե քաղաքի Սբ Հարություն հայկական եկեղեցու օրհնության եւ օծման արարողությունը: Օծման արարողությունը հանդիսապետեց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արք. Բեկչյանը՝ մասնակցությամբ Երեւանի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպս Ժամկոչյանի:



Ի շարս պետական, հասարակական եւ միջեկեղեցական զանազան հյուրերի՝ օծման հանդիսությանը ներկա էր նաեւ Հալլե քաղաքի քաղաքապետ տիկին Դագմար Սցաբադոսը:

***Լրատվական նյութերը՝***
***ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ***
***ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ***

# ՆՈՐ հրատարակություններ

### Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց. «Հատընտիր պաշտոնականք»

Հովակիմ վրդ. Մանուկյանի աշխատասիրությամբ լույս տեսած փաստաթղթերի ծաղկաքաղ այս ժողովածուն ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագույն Պատրիարք Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կոնդակների, ուղերձների, տարբեր առիթներով ունեցած ելույթների, բանախոսությունների եւ խոսքերի անթոլոգիան: Հրատարակվող փաստաթղթերն ընթերցողին ամբողջական պատկերացում են տալիս Հայ Եկեղեցու վերջին տասը տարիների պատմության մասին՝ նրանց ծանոթացնելով հովվական, ազգային հիմնարար խնդիրների, ինչպես նաեւ միջեկեղեցական հարաբերություններում Վեհափառ Հայրապետի սկզբունքներին եւ տեսակետներին: Այն նվիրված է Նորին Սրբության գահակալության 10-ամյա հոբելյանին:

### Ավետիս Պերպերյան. «Պատմություն Հայոց»

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը վերահրատարակել է 19-րդ դարի նշանավոր հեղինակ Ավետիս Պերպերյանի «Պատմություն Հայոց» աշխատությունը: Այն ընդգրկում է 1772-1860 թթ. ժամանակահատվածի հայ ժողովրդի պատմության նշանակալից իրադարձությունները: Առավելապես քննարկման առարկա են դարձել արեւմտահայոց՝ մասնավորաբար պոլսահայության, ինչպես նաեւ Հայոց Եկեղեցու պատմության ամենատարբեր հարցեր: Աշխատությունը տպագրվել է «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ:

### «Հին Կտակարանի գրքերի մեկնություններ» շարքից Գեւորգ Սկեւռացի (ԺԳ դ.). «Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ»

Լույս է տեսել Գեւորգ Սկեւռացու (ԺԳ դ.) «Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ» բնագիրը՝ աշխատասիրությամբ Հասմիկ Բաղալյանի եւ Գեւորգ Տեր-Վարդանյանի: Այն կազմված է Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Սարգիս Կունդի մեկնությունների հիման վրա: Սակայն հեղինակն առավելաբար օգտվել է Հովհան Ոսկեբերանի եւ Եփրեմ Ասորու նույնանուն մեկնություններից: Ոսկեբերանի նույնանուն մեկնության հունարեն բնագիրը մեզ չի հասել, եւ Գեւորգ Սկեւռացու մեկնությունը մեծ նշանակություն ունի Ոսկեբերանի մեկնության բնագրի վերականգնման համար: Բնագիրը տպագրվել է «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ:

# *ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ*
## ԱՊՐԻԼԻ 24-Ը ՀՆԴԿԱՀԱՅՔՈՒՄ



Ապրիլի 24-ին Հնդկահայ համայնքը եւս ոգեկոչեց հայոց Մեծ եղեռնի 95- ամյա տարելիցը:

Կալկաթայի Ս. Նազարեթ Մայր եկեղեցու բակում՝ Եղեռնի հուշակոթողի մոտ, տեղի ունեցավ հոգեհանգստի արարողություն, որի ընթացքում հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն աբղ. Հովհաննիսյանը, Հնդկաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Հակոբյանը, եկեղեցու վարչության անդամները, համայնքն ու ճեմարանականները ծաղկեպսակներ եւ ծաղիկներ դրեցին հուշարձանին:

Իսկ երեկոյան տեղի ունեցավ հիշատակի երեկո՝ մասնակցությամբ ճեմարանականների: Երեկոն բացեց հնդկահայ հայտնի երգիչ Շեյն Հայրապետը՝ «Ավե Մարիա» երգով:

Ներկաներին իրենց պատգամը հղեցին դեսպան Արա Հակոբյանը եւ հայր Խորենը:

Հուշ-երեկոյին խոսք ասաց նաեւ Կալկաթայի կաթոլիկ արք. Լուկաս Սարքարը. «Անհնար է ջնջել հայոց ցեղասպանության փաստը պատմության էջերից, քանի դեռ երկրագնդի վրա գեթ մեկ մարդ է ապրում»:

## «ՀՆԴԿԱՀԱՅՔԻ» ԵՐԿՈՒՆՔԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հնդկաստանի Կալկաթա քաղաքում լույս տեսավ «Հնդկահայք» վերնագրով երկլեզու (հայերեն, անգլերեն) տարեգիրք, որի հիմնադիր-հրատարակիչն է հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ հոգեշնորհ Տ. Խորեն աբղ. Հովհաննիսյանը:

Տարեգիրքը բացվում է Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության գրով:

«Հնդկահայքի» երկունքը ողջունել եւ իրենց բարեմաղթանքի խոսքն են ասել Հնդկաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Հակոբյանը, ամերիկահայ ականավոր պատմաբան, UCLA հռչակավոր համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը, ճեմարանի նախկին սան, Լոնդոնի Բրիտանական գրադարանի գիտաշխատող Տեր Ներսես ավագ քհն. Ներսիսյանը: Տարեգրքում տեղ է գտել ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ողջույնի եւ գնահատանքի խոսքը՝ ուղղված հայր Խորենին՝ իբրեւ պաշտպանի եւ զորավիգի հայ հոգեւոր ու մշակութային ավանդությունների պահպանման եւ զարգացման գործում:

Իր նախադեպը չունեցող «Հնդկահայքը» ընթերցողին համակողմանի կներկայացնի 2009 թ. հնդկահայ համայնքի եւ Հայոց մարդասիրական ճեմարանի անցուդարձը, հոգեւոր հովվի հանդիպումները, ուխտագնացություններ, ճեմարանում կազմակերպված հայապահպանությանը նպաստող ձեռնարկներ, Մարդասիրականի շնորհալիների մասին պատմող նյութեր եւ առավել հետաքրքրական այլ տեղեկություններ: Այնտեղ տեղ են գտել նաեւ Հնդկահայքի փառավոր անցյալի մասին պատմող հոդվածներ:

Տարեգիրքը լինելու է ամենամյա եւ իր էջերում հանրագումարի է բերելու տվյալ տարվա համայնքային եւ ճեմարանական ողջ անցուդարձը:

«Հնդկահայքը» հրատարակվել է Կալկաթայի Ս. Նազարեթ Մայր եկեղեցու վարչության հովանավորությամբ:

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
3.05. 2010 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**